«ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԿԱՅՈՒՆ ՀԱՐԹԱԿ», ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության պիլոտային ծրագիր

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Ծրագրի մասին՝ համառոտ
Տևողությունը ՝ 2018-2020
Բյուջեն ՝ 538,577 եվրո (ԵՄ ներդրումը՝ 480,000 եվրո)
Գործընկերները ՝Սևանի համայնքապետարան, ՀՀ Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ
Վայրը ՝ Սևանի տարածաշրջան՝ շրջակա 11 գյուղական համայնքների հետ միասին
Թիրախային խմբերը ՝ Փոքր ու միջին ձեռնարկություններ (ՓՄՁ), տեղական բիզնեսի ներկայացուցիչներ, աշխատանք փնտրողներ (այդ թվում՝ կանայք, երիտասարդներ և աշխատաշուկայում անբարենպաստ վիճակում գտնվող այլ անձիք)

ԻՐԱՎԻՃԱԿԸ

Սևանի տարածաշրջանը տեղակայված է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում: Այն ունի 1,776 քմ^2 տարածք և ավելի քան 40,500 բնակիչ: Տարածաշրջանը բաղկացած է Սևան քաղաքից (վարչական կենտրոնն է) և շրջակա 11 գյուղական համայնքներից: Վերջինների համար Սևան քաղաքը համակարգող դեր է կատարում. այն տնտեսական կենտրոն է, որն ապահովում է հիմնական բոլոր ենթակառուցվածքները, ռեսուրսներն ու ծառայությունները:

Սևանի տարածաշրջանը տնտեսական ներուժ ունի տարբեր ոլորտներում, մասնավորապես՝ զբոսաշրջությունում և գյուղատնտեսությունում: Սևանի տարածաշրջանի գյուղական բնակավայրերում հիմնական ուշադրությունը դարձվում է գյուղատնտեսությանը, որտեղ առկա է տեղական մոտ 12,000 ֆերմերային տնտեսություն: Զբոսաշրջությունը ևս տեղական տնտեսության զարգացման հիմնական ճյուղերից է, ինչպես նաև զբաղվածության ապահովման գլխավոր աղբյուրներից մեկը: Փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) ոլորտը տեղական տնտեսական համընդգրկուն աճի, տարածաշրջանային զարգացման, զբաղվածության ապահովման և տարածաշրջանում աղքատության կրճատման հիմնական շարժիչ ուժն է:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել Սևանի տարածաշրջանում տնտեսական կայուն աճին և զբաղվածության խթանմանը՝ կիրառելով տեղական տնտեսական զարգացման համալիր ու համակարգված մոտեցում և հատուկ շեշտադրելով ձեռներեցության ու ստարտափների խթանումը: Նախագիծը ձգտելու է լուծել հետևյալ ***հատուկ խնդիրները*** ՝

1) Սևանի տարածաշրջանում հիմնել և զարգացնել նորարարական և շուկայական ուղղվածություն

ունեցող **«Նորարարության խթանման Սևանի բիզնես կենտրոնը»**, որը կբարելավի փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) հասանելիությունը Սևանի տարածաշրջանի և հարևան շրջանների բիզնես զարգացման և աջակցման մեծ թվով ծառայություններին,

2) Սևանի տարածաշրջանում աջակցել և տրամադրել բիզնեսի զարգացման ծառայություններ ՓՄՁ-ներին և ստարտափներին,

3) Սևանի տարածաշրջանի ռազմավարական ոլորտներում բարձրացնել աշխատանքային և մասնագիտական հմտությունների որակը և աշխատատեղերով ապահովել աշխատանք փնտրող անձանց:

ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Նորարարության խթանման Սևանի բիզնես կենտրոնը» կհիմնվի Սևանի տարածաշրջանում՝ որպես բազմաֆունկցիոնալ բիզնես կենտրոն, կտրամադրի համատեղ աշխատելու գրասենյակային պայմաններ և տեղական ՓՄՁ-ների ու ձեռներեցների համար կհանդիսանա գիտելիքների փոխանակման հարթակ:



Կենտրոնը կաջակցի տարբեր ոլորտների գործարարների միջև կապերի հաստատմանը և տեղացի ձեռնարկատերերի միջև համագործակցության հարթակի ձևավորմանը: Այն կկազմակերպի գործարարների միջև շփումներ և նրանց կներգրավի արժեշղթաների զարգացման մեջ՝ շուկաների հասանելիության ապահովումը բարելավելու նպատակով:

Կենտրոնը կտրամադրի նաև կազմակերպչական և մարկետինգային աջակցություն՝ զարգացնելու և կյանքի կոչելու՝

1) ***Միկրոֆրանչայզինգի մոդելներ*** – դրանք կներառեն տեղական բիզնեսների համար օպերացիոն ստանդարտ գործընթացներ, շուկաների հասանելիության ապահովման ռազմավարություն, մատակարարումների շղթայի և ինվենտարիզացիայի արդյունավետ համակարգ, բիզնես գործարքների աջակցում և/կամ որակի ապահովման և վերահսկողության բարելավում,
2) ***Զբոսաշրջության արժեշղթայում մասնակցային զարգացման ռազմավարություն*** – այն կօգնի ավելացնել Սևանի տարածաշրջանից տնտեսական օգուտները, ձևավորել հզոր և մրցակցային զբոսաշրջային հատված, որը կդառնա տեղական տնտեսության հիմնասյուներից մեկը, խթանել զբաղվածությունը և ներդրումներ ներգրավել տարածաշրջանի քաղաքային և գյուղական շրջաններ:

Ծրագրի գործողությունները ներառում են նաև՝

- 50 ստարտափների և գործող 50 տեղական ընկերությունների հավաքագրում և աջակցության տրամադրում՝ արտադրանքի սպառման, գործընթացների կազմակերպման և միջշղթայական նորարարության կիրառման հարցում (նոր/թարմացված պրոդուկտների զարգացում՝ ինտերնետային տեխնոլոգիաների և վեբ-հարթակների կիրառմամբ, նախքան տարածումը՝ նոր արտադրանքի և/կամ ծառայության փորձարկում և այլն):
- Տեղական ձեռնարկություններին աջակցության տրամադրում՝ շուկաներին և ֆինանսներին նրանց հասանելիությունը բարելավելու նպատակով՝ ֆինանսական կառույցների հետ «բաց դռների օրեր» կազմակերպելու և վարկերին նրանց հասանելիությունը հեշտացնելու միջոցով,
- Զբաղվածության գործակալությունների հետ համատեղ՝ 70 աշխատանք փնտրողների զբաղվածության ապահովում: Նախապատվությունը կտրվի կանանց, երիտասարդ ձեռներեցներին և այն աշխատանք փնտրողներին, որոնք աշխատաշուկայում անբարենպաստ վիճակում են:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Սևանի տարածաշրջանում **150** տեղական կազմակերպություններ կստանան Կենտրոնի ծառայությունների հասանելիություն,
- Ծրագրի գործունեության առաջին տարում **100** տեղական ձեռնարկություններ (այդ թվում՝ ստարտափներ) կստանան վերապատրաստման/խորհրդատվական ծառայություններ և կտեղեկացնեն Կենտրոնի դրական ազդեցության մասին,
- **70** տեղական ձեռնարկություններ կդառնան ավելի մրցունակ,
- **150** աշխատողներ կմասնակցեն Կենտրոնի կազմակերպած՝ կարողությունների զարգացման դասընթացներին,
- **70** տեղացի աշխատանք փնտրողներ անմիջական աջակցություն կստանան Ծրագրի կողմից (կարողությունների զարգացում, կապերի հաստատում, վերապատրաստումներ և այլն):

Ծրագրի շրջանակում հիմնական ուշադրությունը դարձվելու է նորարարությանը՝ որպես տնտեսական կայուն զարգացման և զբաղվածության խթանման կարևոր գործոնի: Տեղական ներուժի և բիզնես ենթակառուցվածքների ընդլայնումը դրական կազդի տնտեսական աճի և ձեռնարկությունների տարեկան շրջանառության ավելացման, ծախսերի կրճատման ու արդյունավետության բարձրացման

վրա: Որպես արդյունք, Սևանի տարածաշրջանի և շրջակա 11 գյուղական համայնքների բնակիչների տնտեսական բարեկեցության մակարդակը կբարձրանա:

«Նորարարության խթանման կայուն հարթակ» պիլոտային ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում՝ «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության շրջանակում: Նախաձեռնությունը մեկնարկել է 2017թ. հունվարին՝ Արևելյան գործընկերության շրջանակում: Նախաձեռնության գլխավոր նպատակն է աջակցել Արևելյան գործընկերության երկրների համայնքներին և վերջիններիս ղեկավարներին՝ դառնալու տեղական մակարդակում տնտեսական զարգացման և աշխատատեղերի ստեղծման ակտիվ նախաձեռնող: Ավելի մանրամասն տեղեկատվության համար կարող եք այցելել պաշտոնական կայքը www.m4eg.eu:

Նախագիծը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Այս փաստաթուղթը պատրաստվել է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության շրջանակում:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է/են միայն հեղինակ/ները, և այն կարող է չարտահայտել Եվրոպական միության տեսակետները: